«Կանայք քաղաքականության, հանրային կառավարման և քաղաքացիական հասարակության մեջ» ծրագիր

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Բովանդակություն

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ.....2

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ 3

ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԱՐՑԱԽԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ.....6

ԱՐՑԱԽԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ.....10

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՑԱԽԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀՀ-ում ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ.....14

ԵՐԵՎԱՆ 2023

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

Հապավում	Բացատրություն
ԱՀ	Արցախի Հանրապետություն
զլմ	Զանգվածային լրատվամիջոց
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀԴ	Հայաստանի Հանրապետության դրամ
ՀՀ ՆԳՆ	Հայաստանի Հանրապետության Ներքին գործերի նախարարություն
ՀՀ ՏԿԵՆ	Հայաստանի Հանրապետության Տեղական կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՄՄԾ	Միասնական սոցիալական ծառայություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանի սանձազերծած պատերազմը տևեց 44 օր: Այդ ընթացքում Ադրբեջանը բռնագրավեց Արցախի մի շարք տարածքներ. 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության համաձայն Ադրբեջանի վերահսկողության տակ անցան Շուշի քաղաքը, Քարվաճառի, Բերձորի, Աղդամի շրջանները[1]: Այդ շրջաններից պատերազմի ընթացքում տեղահանվեցին շուրջ 90 հազար հոգի: 2020 թվականի ռազմական գործողությունների ընթացքում Հայաստան եկած մարդկանց մոտավորապես 80%-ը կանայք և երեխաներ էին[2]: Պատերազմի ավարտից հետո նրանց մեծամասնությունը վերադարձան Արցախ, մի մասը բնակություն հաստատեցին Հայաստանում, իսկ բռնագրված շրջանների բնակիչները վերաբնակվեցին Արցախի այլ բնակավայրերում:

2022 թվականի դեկտեմբերի 12-ին ադրբեջանցիները շրջափակեցին Արցախի Հանրապետության հայկական վերահսկողության ներքո գտնվող տարածքը՝ փակելով Արցախը Հայաստանին կապող միակ ճանապարհը Շուշի-Քարին տակ խաչմերուկի հատվածում, որը գտնվում էր Ռուսաստանի Դաշնության Զինված Ուժերի խաղաղապահ առաքելություն ստանձնած զորքերի պատասխանատվության գոտում[3]: 9 ամիս տևած շրջափակման ընթացքում Ադրբեջանը պարբերաբար խափանում էր Հայաստանից Արցախ գազի մատակարարումը, էլեկտրամատակարարումը, ջրամատակարարումը և կապը: 9 ամիսների ընթացքում արցախցիներն ապրել են սովի, դեղորայքի և առաջին անհրաժեշտության ապրանքների բացակայության, կենցաղային անբավարար պայմանների, վախի և բռնաճնշման մթնոլորտում:

---

[1] Ալիևի, Փաշինյանի և Պուտինի հայտարարության 9 կետերը, Mediamax, նոյեմբերի 10, 2020 (Աղբյուրը՝ https://mediamax.am/am/news/region/40789/):

[2] Կին ակտիվիստների եվ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ձայները. նրանք Հայաստանում փախստականների ճգնաժամին առաջին արձագանքողներից են, ՄԱԿ կանայք, 2023:

[3] Isayev H., Shahverdyan L., Azerbajanis again block the road to Karabagh, 12 December, 2022, Eurasianet (Աղբյուրը՝ https://eurasianet.org/azerbaijanis-again-block-the-road-to-karabakh):

2023 թվականի սեպտեմբերի 19-ին Ադրբեջանը լայնածավալ ռազմական հարձակում սկսեց ընդդեմ Արցախի Հանրապետության։ Այն ուղեկցվել է հայ ազգաբնակչության էթնիկ զտումներով[4,5]։ Դրան հետևեց արցախահայության բռնի տեղահանումն Արցախից. սեպտեմբերի 24-ին արցախցիների առաջին 40-հոգանոց խումբը հասավ Կոռնիձոր[6]։ Վերջին տվյալներով Արցախից բռնի տեղահանված 101 848 անձ է ժամանել Հայաստան[7]։ ՀՀ ՏԿԵՆ տվյալների համաձայն՝ հոկտեմբերի 7-ի դրությամբ 76 692 մարդ գտնվում էին ՀՀ տարբեր մարզերում։ Ըստ մարզերի բաշխվածությունն ունի հետևյալ պատկերը. Արագածոտնում՝ 4109, Արարատում՝ 18 367, Արմավիրում՝ 8144, Գեղարքունիքում՝ 4895, Լոռում՝ 4541, Կոտայքում՝ 22 150, Շիրակի մարզում՝ 2168, Սյունիքում՝ 5438, Վայոց ձորում՝ 2303, Տավուշում՝ 3189 անձ[8]։ ՄԱԿ կանայք կողմից Գենդերային առաջին ահազանգում հրապարակած տվյալների համաձայն բռնի տեղահանված արցախցիների 27% կացարան էին գտել Երևանում, իսկ 73%՝ ՀՀ տարբեր մարզերում[9]։ Սակայն մարդկանց շարժը բնակավայրից բնակավայր չի կանգնում առ այսօր մարդիկ տեղափոխվում են՝ փնտրելով ավելի հարմար կամ մատչելի կացարան, աշխատանք կամ հարազատներին մոտ են տեղափոխվում։

---

[4] Ադրբեջանական զինուժը շփման գծի ողջ երկայնքով խախտել է հրադադարը՝ հասցնելով հրթիռահրետանային հարվածներ. ՊԲ, news.am, 19.09.2023 (Աղբյուրը՝ https://news.am/arm/news/781649.html)։

[5] Էթնիկ զտումներ Լեռնային Ղարաբաղում՝ ԵՄ-ի հավանությամբ. «Եվրոպացիներն հանուն Արցախի» նախաձեռնության նամակը Շառլ Միշելին, Armenpress, սեպտեմբերի 22, 2023 (Աղբյուրը՝ https://armenpress.am/arm/news/1120280.html)։

[6] Արցախցիների առաջին խումբը հասավ Կոռնիձոր, CIVILNET, 24 սեպտեմբեր, 2023 (Աղբյուրը՝ https://www.civilnet.am/news/751873/)։

[7] ԼՂ–ից բռնի տեղահանվածներին հավելյալ 50000 դրամ կտրամադրվի, բայց կլինեն բացառություններ, Սպուտնիկ Արմենիա, 23.10.2023 (Աղբյուրը՝ https://armeniasputnik.am/20231023/lghic-brni-teghahanvatsnerin-haveljal-50000-dram-ktramadrvi-bajc-klinen-bacarutjunner-67594146.html)։

[8] ԼՂ-ից բռնի տեղահանված 100 632 անձից 99,3 տոկոսի տվյալները մշակված են. Նազելի Բաղդասարյան, Առաջին լրատվական ալիք, 7 հոկտեմբերի, 2023 (Աղբյուրը՝ https://www.1lurer.am/hy/2023/10/07/)։

[9] Կին ակտիվիստների և~~եվ~~ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ձայները. նրանք Հայաստանում փախստականների ճգնաժամին առաջին արձագանքողներից են, ՄԱԿ կանայք, 2023։

Արցախից բռնի տեղահանվածների 52% կանայք և աղջիկներ են, 31%՝ երեխաներ և 18%՝ տարեցներ[10]:

[10] Կին ակտիվիստների ևեվ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ձայները. նրանք Հայաստանում փախստականների ճգնաժամին առաջին արձագանքողներից են, ՄԱԿ կանայք, 2023:

ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԱՐՑԱԽԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

2020 թվականի Արցախյան 44-օրյա պատերազմից հետո ՀՀ կառավարությունը աջակցության հետևյալ միջոցառումներն էր նախատեսել՝

1. նվազագույն ամսական աշխատավարձի չափով (68000 ՀՀԴ) միանվագ դրամական օգնություն,
2. 15000 դրամի չափով աջակցություն կեցավայրի համար այն շահառուներին, ովքեր չունեն սեփականության (այդ թվում՝ բաժնային) իրավունքով Հայաստանի Հանրապետությունում գտնվող անշարժ գույք,
3. 300000 դրամ միանվագ դրամական օգնություն Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի հետևանքով տեղահանված և փաստացի Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախում գտնվող Արցախի քաղաքացիների համար, որոնք ունեն Ադրբեջանի վերահսկողության տակ անցած Արցախի համայնքի հաշվառում։
4. Արցախի Հանրապետության վերահսկողությունից դուրս մնացած համայնքներում հաշվառված չափահաս քաղաքացիներին ժամանակավոր հյուրընկալողների ծախսերի փոխհատուցման վեցամսյա միջոցառում՝ 30000 ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր հյուրընկալած չափահաս անձի համար՝ ՀՀ-ում, 45000 ՀՀԴ՝ յուրաքանչյուր հյուրընկալած չափահաս անձի համար՝ Արցախում։
5. Պատերազմական գործողությունների հետևանքով քաղաքացիական անձանց շրջանում զոհերի ընտանիքներին և հաշմանդամություն ձեռք բերած անձանց սոցիալական աջակցություն՝ 1-5 մլն. ՀՀԴ։
6. Պատերազմի ընթացքում հրետակոծության հետևանքով ՀՀ քաղաքացիների անշարժ գույքին հասցված վնասների փոխհատուցում։
7. Պատերազմի ընթացքում մարտական գործողությունների մասնակից սովորողների, ինչպես նաև պատերազմի ընթացքում մարտական գործողությունների մասնակից անձանց սովորող երեխաների և սովորող

ամուսնու 2020-2021թթ. ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ուսման վարձ՝ 100%-ի չափով փոխհատուցում:

8. Արցախի Հանրապետությունում հաշվառված և հաշվառման հասցեում գտնվող բնակելի անշարժ գույքը Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի պատճառած ավերածությունների հետևանքով կամ այլ պատճառներով կորցրած քաղաքացիների աջակցություն՝ ընտանիքի յուրաքանչյուր անդամին՝ 250000 ՀՀԴ:
9. Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով անհայտ կորած զինծառայողների ընտանիքների աջակցություն՝ ամենամսյա դրամական վճար յուրաքանչյուր անհայտ կորած զինծառայողի հաշվով ամսական 300 000 դրամի չափով, բայց ոչ ավելի, քան 6 ամսվա համար[11]:

2023 թվականի սեպտեմբերի 19-ից Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանված և ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից հաշվառված բռնի տեղահանվածների համար ՀՀ կառավարությունը նախատեսել է հետևյալ միջոցառումները[12]՝

1. ՀՀ կառավարությունը ցուցակագրել էր 40000 հոգի ընդունելու համար կացարաններ ՀՀ տարբեր բնակավայրերում: Դրանք ներառում էին հանրակացարաններ, հանգստյան տներ, դատարկ տներ և այլն:
2. 100000 ՀՀԴ միանվագ դրամական սոցիալական աջակցություն 2023 թվականի սեպտեմբերի 19-ից Ադրբեջանի կողմից Արցախի դեմ սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանվածներին:

[11] Աջակցության միջոցառումներ, ՀՀ կառավարություն (Աղբյուրը՝ https://www.gov.am/am/support-measures/):
[12] ՀՀ ԱՍՀՆ ֆեյսբուքյան պաշտոնական կայքէջ (Աղբյուրը՝ https://www.facebook.com/mlsa.am):

3. Արցախից բռնի տեղահանված անձանց համար կացարանում բնակվելու և կոմունալ ծառայությունների ծախսերի համար 40+10 հազար աջակցություն նոյեմբեր և հաջորդող ամիսների համար՝ ընդամենը 6 ամիս ժամկետով։
4. Արցախից բռնի տեղահանված անձանց երկամսյա 50000 ՀՀԴ աջակցություն։
5. Հոկտեմբերի 26 որոշմամբ ՀՀ կառավարությունը ժամանակավոր պաշտպանության կարգավիճակ տրամադրեց Արցախից բռնի տեղահանված անձանց, որից հետո նրանք կկարողանան ստանալ ՀՀ քաղաքացիություն արագացված ընթացակարգով։
6. Արցախից բռնի տեղահանված այն անձինք, որոնք կենսաթոշակ և/կամ նպաստ էին ստանում Արցախում, ստանալու են այդ սոցիալական երաշխիքները ՀՀ օրենքներին համաձայն[13]։ Սույն փաստաթուղթը պատրաստելու պահին գործընթացը դեռևս չէր մեկնարկել։
7. Արցախից բռնի տեղահանված 2384 անձ աշխատանքային պայմանագիր են կնքել ՀՀ-ում, 3490 հաշվառվել են որպես աշխատանք փնտրող ՄՄԾ-ում[14]։
8. ՀՀ վարչապետը հայտնել է, որ առաջիկա օրերին կսկսվի նաև Արցախից բռնի տեղահանվածների բնակարանային ապահովման երկարաժամկետ աջակցության հարցերի քննարկումները, որոնք առավելագույնս համադրված կլինեն ՀՀ քաղաքացիների համար նախատեսվող նմանատիպ ծրագրերի հետ[15]։

Բացի պետական միջոցառումներից Արցախցիներին հումանիտար աջակցություն տրամադրել են նաև ՏԻՄ-երը, ՀԿ-ները և կամավոր անձիք։ Հումանիտար աջակցությունը ներառում էր՝

1. Սննդի փաթեթներ
2. Հիգիենայի պարագաներ

---

[13] ՀՀ-ում կենսաթոշակներն ու նպաստներն ավելի ցածր են, քան եղել են Արցախում։

[14] ԱՍՀ նախարարի տեղակալ Ռ. Սարգսյան, մամուլի ասուլիս, ՀՀ ԱՍՀՆ ֆեյսբուքյան պաշտոնական կայքէջ (Աղբյուրը՝ https://www.facebook.com/mlsa.am)։

[15] ԼՂ–ից բռնի տեղահանվածներին հավելյալ 50000 դրամ կտրամադրվի, բայց կլինեն բացառություններ, Սպուտնիկ Արմենիա, 23.10.2023 (Աղբյուրը՝ https://armeniasputnik.am/20231023/lghic-brni-teghahanvatsnerin-haveljal-50000-dram-ktramadrvi-bajc-klinen-bacarutjunner-67594146.html)։

3. Հագուստ
4. Անկողնային պարագաներ
5. Կենցաղային տեխնիկա

ՏԻՄ-երը պետական կառույցների հետ համատեղ ընդգրկվել են նաև արցախցիների հաշվառման, կարիքների գնահատման և հասցեական աջակցության տրամադրման գործընթացներում։

Միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունները վերանայել են իրենց կողմից իրականացվող ծրագրերը և վերաուղղորդում են ռեսուրսներն Արցախից բռնի տեղահանված անձնց համար կարճաժամկետ աջակցության ուղղությամբ, ինչպես նաև միջնաժամկետ և երկարաժամկետ ինտեգրման ծրագրերի մշակման ուղղությամբ։

ԱՐՑԱԽԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Արցախից բռնի տեղահանվածների հոսքը պարտադրեց Հայաստանում գործող մի շարք տեղական և միջազգային կազմակերպություններին, այդ թվում ՕքսԵՋեն հիմնադրամին, իրենց ուշադրությունն ու ծրագրային ներուժը տեղափոխել բռնի տեղահանված անձանց համար երկարաժամկետ աջակցության ծրագրեր մշակելու ուղղությամբ: ՕքսԵՋեն հիմնադրամը սևեռեց իր ուշադրությունը Արցախից բռնի տեղահանված անձանց սոցիալական ներառման հիմնախնդրի վրա և նախաձեռնեց հիմնախնդիրների վերհանմանը, վալիդացիային և առաջնահերթությունների որոշմանն ուղղված հանդիպումների շարք: Հանդիպումների նպատակն էր՝

- բացահայտել/գնահատել Արցախից բռնի տեղահանված բնակչության, մասնավորապես կանանց ներառման և սոցիալական համախմբման կարիքներն ու հեռանկարները՝ հաշվի առնելով պատերազմի ազդեցությունը,
- ուսումնասիրել հյուրընկալող համայնքներում ներառման հեռանկարները և մարտահրավերները,
- վերլուծել քաղաքականություններն ու գործելակերպերը, որոնք խոչընդոտում կամ նպաստում են սոցիալական ներառմանը,
- հավաքագրել տեղական մարտահրավերներ, լուծումներ, առաջարկություններ՝ ստեղծելու սոցիալական ներառման և սոցիալական համախմբվածության ռազմավարական ճանապարհային քարտեզ՝ դրանք բարձրացնելու ազգային մակարդակ, և/կամ տարածել տեղական մակարդակում:

2023 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին իրականացվել են կանանց աշխատանքային խմբերի հետ հանդիպումներ, հիմնախնդրի կրողների՝ Արցախից բռնի տեղահանվածների, հետ հանդիպումներ, մարզային քննարկումներ, ինչպես նաև ՔՀԿ-ների և փորձագետների հետ քննարկումներ *(Տե՛ս Աղյուսակ 1.)*:

Աղյուսակ 1. ՀՀ-ում Արցախից բռնի տեղահանվածների սոցիալական ներառման հիմնախնդիրների վերհանման և առաջնահերթությունների սահմանման նպատակով ՕքսեՋեն հիմնադրամի կողմից իրականացված միջոցառումները:

Ամսաթիվ	Մասնակիցներ	Չևաչափ	Նպատակ	Արդյունք
19.10.2023	Կանանց աշխատանքային խումբ	Առցանց	Ուղեղների գրոհ	Վերհանած հիմնախնդիրներ
23.10.2023	Չարենցավան համայնքում բնակվող Արցախից բռնի տեղահանված անձինք	Անցանց	Հիմնախնդիրներ ի քննարկում	Վերհանած հիմնախնդիրներ
30.10.2023	Մարզային հանդիպում՝ մարզպետարանների ներկայացուցիչների, ՀՀ տարբեր համայնքների ղեկավարների, վարչական ղեկավարների	Առցանց	Հիմնախնդիրներ ի վալիդացիա	Հիմնախնդիրների վալիդացիա
10.11.2023	ՔՀԿ-ների և փորձագետների հետ հանդիպում	Առցանց	Առաջնահերթությունների սահմանում	Հիմնախնդիրների առաջնահերթությունների որոշում

Արցախից բռնի տեղահանված անձանց, կանանց աշխատանքային խմբի, ՏԻՄ և ՔՀԿ ներկայացուցիչների հետ առաջին հանդիպումները հնարավորություն տվեցին վեր հանել Արցախից բռնի տեղահանվածների հետևյալ հիմնախնդիրները և դասավորել դրանք ըստ առաջնահերթության՝

1. Կացարանի հետ կապված խնդիրներ.
   1.1. Կացարանների անբավարար քանակ,
   1.2. Կացարանների անբավարար կենցաղային պայմաններ, կացարանի վերանորոգման կարիք,
   1.3. Տան վարձերի կտրուկ բարձրացում,
   1.4. Դատարկ տների սեփականատերերը հրաժարվում են հանձնել բնակարանները՝ վախենալով, որ վարձը չեն ստանա կամ արցախցիները չեն ազատի տունը հարկ եղած դեպքում,
   1.5. Արցախցիները դեռևս չեն կողմնորոշվում՝ թե որ բնակավայրում են ապրելու, ինչի պատճառով համայնքից-համայնք տեղաշարժի մեծ ծավալներ են առկա:
2. Բնաիրային աջակցության կարիք.
   2.1. Սննդի կարիք,

2.2.Հիգիենայի պարագաների կարիք,

2.3.Անկողնային պարագաների կարիք,

2.4.Կենցաղային տեխնիկայի կարիք,

2.5.Հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ աջակցող սարքերի կարիք:

3. Զբաղվածության խնդիր.Արցախցիների ակնկալիքներից ավելի ցածր վարձատրվող աշխատատեղեր,

3.2.Արցախցիները չեն ցանկանում աշխատանք փնտրել, քանի դեռ չեն կողմնորոշվել բնակության վայրի առումով,

3.3.ՀՀ-ում հողը սեփականաշնորհված է, այդ թվում գյուղատնտեսական նշանակության,

3.4.Մասնագիտությամբ աշխատանք գտնելը հաճախ խնդրահարույց է, նոր մասնագիտության ձեռք բերման կամ վերապրոֆիլավորման կարիք կա:

4. Երեխաների կրթության խնդիրը.

4.1.Մանկապարտեզները լիցենզավորված են և սահմանված թվով երեխաներից ավել ընդունելու իրավունք չունեն. արդյունքում՝ շատ արցախցի երեխաների համար մանկապարտեզում տեղ չկա,

4.2.Արցախցի դպրոցականների կրթությունը 2020 թվականից ի վեր խոչընդոտվել է COVID-19-ի, պատերազմական գործողությունների, շրջափակման, սովի և թերսնուցման, բռնի տեղահանման պատճառով. արդյունքում շատերը հետ են մնացել դպրոցական ծրագրից,

4.3.Արցախցի դպրոցականները բարբառով են խոսում, որն էապես տարբերվում է հայաստանյան տարբեր բնակավայրերի բարբառերից: Հաճախակի դա դառնում է դպրոցական կոլեկտիվում ինտեգրվելու խոչընդոտ և բուլինգի պատճառ,

4.4.Արցախցի երեխաները դժվարությամբ են հարմարվում նոր դպրոցներում նաև հետտրավմատիկ խանգարումներով պայմանավորված հոգեբանական

պատճառներով՝ հիասթափված են, վախեցած են, ընտանիքում ծանր մթնոլորտ է, հրաժարվում են դպրոց գնալ,

4.5. Որոշ երեխաներ ուսուցիչներին չեն հասկանում բարբառային տարբերությունների պատճառով, ինչի պատճառով ցածր են գնահատվում,

4.6. Որոշ ուսուցիչների, ծնողների և երեխաների խտրական վերաբերմունքը:

5. Միայնակ տարեցների խնամքի կազմակերպման խնդիր:
6. Տեղաբնակների հետ աշխատանք՝ ոչ խտրական վերաբերմունք ձևավորելու ուղղությամբ:
7. Հստակության և կանխատեսելիության բացակայությունը՝ թե՛ բնակավայրի ընտրության չափանիշների առումով, թե՛ զբաղվածության, թե՛ սոցիալական տարաբնույթ համակարգերից օգտվելու:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՑԱԽԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀՀ-ում ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

1. Մշակել Արցախից բռնի տեղահանված անձանց և տեղացիների համար բնակարանային ապահովության երկարաժամկետ ծրագրեր՝
   1.1. Թեթև կոնստրուկցիաներով առանձնատները կառուցել ՀՀ տարբեր բնակավայրերի տարբեր թաղամասերում, որպեսզի արցախցիները բնակվեն տեղացիների հետ նույն թաղամասերում,
   1.2. ՀՀ սահմանամերձ բնակավայրերում բնակվող ընտանիքների համար երկարաժամկետ անտոկոս փոխառությունների տրամադրման ձևաչափով՝ եկամտային հարկից գումարների վերադարձի հնարավորությամբ,
   1.3. Արցախից տեղահանված այն անձանց համար, որոնք ի վիճակի չեն գնել բնակարան, մշակել տան վարձի պայմանագրի 50%-ի չափով փոխհատուցման, եթե տան վարձը չի գերազանցում 100000 ՀՀԴ՝ մեկ տարի ժամկետով,
   1.4. Արցախից տեղահանված առավել խոցելի խմբերի ներկայացուցիչների համար նախատեսել կոմունալ ծախսերի (ջուր, էլեկտրաէներգիա և գազի սպառում) նվազագույն չափով փոխհատուցման ծրագրեր՝ մեկ տարի ժամկետով,
   1.5. Սահմանել արցախցի ընտանիքներին հյուրընկալած տեղացի ընտանիքների համար կոմունալ վարձերի 50% չափով փոխհատուցում կամ նույն չափով եկամտային հարկից գումարների վերադարձի հնարավորություն մեկ տարի ժամկետով։
2. Մշակել Արցախից բռնի տեղահանված անձանց համար զբաղվածության ծրագրեր, որոնք կնախատեսեն նախապատրաստական մասնագիտական ուսուցում և վերապատրաստումներ։ Մասնավորապես՝

2.1. 18-35 տարեկան բարձրագույն կրթություն չունեցող կանանց համար արհեստագործական մասնագիտություններով՝ հեռանկարում աշխատանքի տեղավորման հնարավորությամբ,

2.2. 18-35 տարեկան երիտասարդ կանանց և տղամարդկանց համար նորարարական գյուղատնտեսության, տեղեկատվական տեխնոլոգիաների, սոցիալ-հոգեբանական աջակցության, սպասարկման և հաղորդակցությունների ոլորտում դասընթացներ։

3. Մշակել Արցախից բռնի տեղահանված անձանց համար փոքր և միջին ձեռնարկատիրական գործունեության մեջ ընդգրկվելուն նպաստող ծրագրեր։ Մասնավորապես՝ փոխառություններ, ցածր տոկոսադրույքով բիզնես վարկեր և գյուղատնտեսական վարկեր։

4. Վերապատրաստել դպրոցական ուսուցիչներին հետևյալ թեմաներով՝

- Հավասար իրավունքներ և ներառականություն. հատուկ շեշտադրել յուրաքանչյուր երեխայի նկատմամբ անխտրական վերաբերմունքի կարևորությունը՝ անկախ սեռից, տարիքից, ազգությունից, ծագումից և այլն,
- Հետտրավմատիկ սթրեսային խանգարում. հիմնական դրսևորումները երեխաների տարբեր տարիքային խմբերում, առաջին արձագանքի տեխնիկաները և հոգեբանի մոտ ուղղորդման անհրաժեշտության ախտորոշում,
- Իմիգրանտ երեխաների ինտեգրումը կրթական համակարգում,
- Ուսումնասիրել Սիրիայում պատերազմի պատճառով Հայաստանում փախստական սիրիահայ երեխաների հետ աշխատած մանկավարժների փորձը և կազմակերպել փորձի փոխանակում ներկայումս Արցախից բռնի տեղահանված երեխաների հետ աշխատող մանկավարժների հետ։
- Հանրակրթական դպրոցներում նախատեսել արցախցի երեխաների համար լրացուցիչ դասեր՝ կրթական բացերը լրացնելու նպատակով։

5. Ընդլայնել միայնակ տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց տնային խնամքի կազմակերպման ծրագրերը՝ ներառելով ինչպես Արցախից բռնի տեղահանված անձանց, այնպես էլ տեղացիներին։
6. Մշակել արցախցիների նկատմամբ տեղաբնակների ոչ խտրական վերաբերմունք ձևավորելուն և ամրապնդելուն ուղղված իրազեկման արշավներ, իրազեկող նյութեր (տեսահոլովակներ, մեմեր, խաղեր)՝ կիրառելով վարքի փոփոխության (BCC) մեթոդաբանությունը։ Պարբերաբար շրջանառել ԶԼՄ-ներով ու սոցիալական ցանցերով: Որպես ֆինանսավորման հնարավոր աղբյուր կարելի է դիտարկել ԿԳՄՍ նախարարության դրամաշնորհային ծրագրերը։
7. Նախաձեռնել իմիգրանտների համար սոցիալական ինտեգրման ուղեցույցների մշակում, որոնք կներառեն հատուկ կարիքներով անձանց համար մատչելի վիզուալ լուծումներ՝ ինֆոգրաֆիկաներ, իմիգրանտների հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունների և մասնագետների ցանկեր և կոնտակտային տվյալներ։ Դրանք պետք է պարունակեն հետևյալ բաժինները՝
    - Բնակարանային ապահովության ծրագրեր, մատչելի բնակարաններ,
    - Լեզվական և մշակութային ինտեգրում,
    - Կենցաղային ինտեգրում տվյալ բնակավայրում,
    - Կրթական ինտեգրում,
    - Ինտեգրում աշխատաշուկա,
    - Սոցիալական ծառայություններ,
    - Հոգեբանական աջակցություն,
    - Փախստականի կարգավիճակի առանձնահատկությունների, սոցիալական պաշտպանության, իրավունքների և պարտականությունների մասին,
    - Տարածել մշակած ուղեցույցները մատչելի խողովակներով՝ ԶԼՄ-ներ, սոցիալական ցանցեր, թռուցիկների և բուքլետների բաժանում: Տպագիր տարբերակների հասանելիությունն ապահովել

համայնքապետարաններում: Էլեկտրոնային տարբերակները տեղադրել համայնքապետարանների և համապատասխան գերատեսչությունների կայքէջերում:

8. ԱՍՀՆ թեժ գծին առընթեր ձևավորել Արցախից բռնի տեղահանված անձանց խնդիրները համակարգելող օպերատորների թիմ: Այն կապահովի նպատակային թիրախավորված օգնության բաշխում, կարիքները համաժամանակյա գնահատում և հեռախոսային հոգեբանական աջակցություն:

Այս քաղաքականության համառոտագիրը պատրաստվել է Հայաստանում վերջին տարիներին իրականացված հետազոտությունների արդյունքների վերլուծության հիման վրա և արտացոլում է ծրագրի փորձագետների, ինչպես նաև Երևանում և ՀՀ մարզերում անցկացված երկխոսության միջոցառումների մասնակիցների տեսակետները։

«Կանայք քաղաքականության, հանրային կառավարման և քաղաքացիական հասարակության մեջ» ծրագիրն իրականացվում է ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և ՕքսԵՋԵն հիմնադրամի հետ համագործակցությամբ, Միացյալ Թագավորության կառավարության «Լավ կառավարման հիմնադրամի» աջակցությամբ։

Նյութը պատրաստվել է Միացյալ Թագավորության կառավարության ֆինանսավորմամբ։ Արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ արտացոլեն Միացյալ Թագավորության կառավարության պաշտոնական դիրքորոշումը։ Նյութում արտահայտված կարծիքները պատկանում են հեղինակներին և պարտադիր չէ, որ արտացոլեն ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի տեսակետները։